

ՆՈՒՊԱՐ ՊԱԼՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
7 դասարանի ուսանող)

Դ Ե Պ Ի Ա Ր Ե Վ

Որքա՛ն երազ ու որքա՛ն սեր,
Ու որքա՛ն խիճկ կա մեր սրտում,
Ու ձգտումներ բյուր բյուրավոր,
Որ ամեն օր,
Մեր պողպատյա ձեռքերի տակ
Շունչ առնելով,
Կյանք են վազում գետի նման,
Դառնում օվկիան:
Մեկս այստեղ հաստոցի մոտ,
Մյուսս դաշտերում լայնատարած,
Եվ ամենուր՝ օդում, ծովում,
Եվ ցամաքում,
Մի սիրտ դարձած,
Մարգարտակոտ փառն ենք դնում
Խաղաղության սեզ փառոսի
Պատվանդանին՝ խնդությամբ լի:
Ու դեռ փանի մեր ջիղերում,
Հայկա տոհմի արյունը կա,
Ու դեռ փանի ծերունազարդ,
Մեր Մասիսն է կանգնած վկա,
Բյուրերի հետ պիտ պսակենք
Փառքերով ճոր,
Մենք ամեն օր,
Մեր երկնահաս Հայրենիքի
Ճակատը վես,
Նոր հարսի պես,
Ու պիտ գոչենք աշխարհով մեկ՝
«Խաղա՛ղ եղեք»:
Ու թե հանկարծ կիսատ մնան,
Եթազները մեր բյուրավոր,
Որ հույզերն են մարդկանց բոլոր,
Չենք տխրի մենք,
Զի լավ գիտենք,

Որ մանուկը Ոսկեդարի
Մեր նույն իղձով պիտի ծնվի:
Եվ արքած ճոր կյանքի ոգով,
Ազգերի հետ եղբայրական,
Իր բյուրեղյա շփեղ փառքով,
Հանճարներով անմահական,
Դեպ իր երազն է ընթանում
Ժողովուրդն իմ հազարամյա,
Վաղուց փշրած կապանքներն հին,
Դարձած կյանքին,
Հաստատ բռնած եղբայրության
Անմար ջանք գլխից վերև
Որպես արև,
Ու հաղթական այս շփերի
Անփակտելի կոտ շարքերում,
Դեղածիծաղ Ոսկեդարի
Նոր հայի հետ նույն դիրքերում,
Հաղթ փայլում է փառ նվաճում,
Սուրբ երգիչը Ավարայրի,
Ու Պատմահայր Խորենացիին,
Քերթողը մեծ Հայոց Ազգի:
Ահա տեսե՛ք նրանց կողմին,
Մատյաններով մեծապատան,
Հանճարներն են մեր բյուրավոր,
Աստղերի պես ջինջ ու անմար,
Որոնք դարեր Հայրենիքիս
Վես ճակատն են փառքով օծել,
Ու շողացրել ինչպես Մասիս,
Ճամբարներում մութ ու անել,
Սահակը սուրբ, Ներսեսը մեծ,
Ու Մաշտոցը, մեծ ուսուցիչ,

Որ լույս տվեց հայու հոգուն
 Ու երա կոշտ ձեռքին՝ գրիչ,
 Որ եա խավար մղձավանջում,
 Հոգու լույսով հարթի ուղին,
 Ճիւղաններում բիրտ ազգերի,
 Չմեա հայն երբեք գերի:
 Տե՛ս, Վարդանը լայնաբիկունք,
 Ճախրող արծիվն Ավարայրի,
 Ու Վասակը հայրենադավ,
 Գրիսը կախ ու թախծալի,
 Իր զոջանքի երգն է երգում,
 Զարթնած իր սին երազներից...
 Ու դեռ անմահ Նարեկացին,
 Ու Քուչակը՝ փառքի գագաթ,
 Սայաթ-Նովան՝ սիրո փնար,
 Իր երգերով վեհ ու անհաղթ,
 Արուսյանը՝ «Վերս»-ի երգիչ
 Ու հիմնադար մեր նոր լեզվի,
 Սիամանթոն՝ կայծերի խուրձ,
 Ու Դուրյանը՝ լիվուծ հոգի,
 Մեծարենցը՝ հոգու թրթիռ,

Վարուժանը՝ հանճարամիտ,
 Ու վերջապես ձայնի արհան՝
 Կոմիտասը՝ անկրկնելի:
 Ու ֆայլում են, ֆայլում կրկին,
 Հանճարներն մեր բազմաբեղուն,
 Դեպի առաջ, դեպի նոր կյանք,
 Դեպի արևն հազարանուն:

Փա՛նք ֆեզ հավենտ, դու տառապած,
 Բայց միշտ ջանել Հայրենիք իմ.
 Քո գարունքի այս վեհ պահին,
 Մաղթում ենք ֆեզ, ամբողջ հոգով,
 Միշտ Մասսի պես դարեր շողաս,
 Ու փառքերով քո նորանոր,
 Լինես միշտ վեհ ու երկնահաս,
 Շեփորների զիլ կանչի տակ,
 Բռնած ջանք գլխիդ վերև,
 Ազատասեր մարդկության հետ,
 Հաղթ ֆայլերով հասնես արև:

